ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 404-Ա

«01» 11 2022 թ. ք. Երևան

ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ, ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ Գ. ԷԼԻԶԲԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 335-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մինչև «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պարտականությունների կատարումը ս.թ. նոյեմբերի 2-ից դնել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ Գրիգոր Վալիկոյի Էլիզբարյանի վրա:

2. Սույն թվականի նոյեմբերի 2-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պարտականությունների կատարումը Գ. Հակոբյանի վրա դնելու մասին» 2022 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 335-Ա հրամանը:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ